260 թ. սպանեցաւ Ալայ ի. Ահմեդ Ատրպատականում։

285 թ. Մուտադիդ ամիրապետը դրեց Մուհամմեդ ի. Աբու Սաջին կառավարիչ Ատրպատականի եւ Հայաստանի վերայ։

Դ. Եաքուբի։

Հեղինակի անունն է՝ Ահմեդ ի. աբի Եաքուբ ի. Ջաֆար ի. Վահբ ի. Վաթիհ Աբբասի. նա թոռն էր Վաթիհի, խալիֆ Մանսուրի արձակուած սարուկի, որ կառավարչի պաշտօն վարեց Հայաստանում, Ատրպատականում եւ Եգիպտոսում, լինելով գաղտնի շիիթ։ Նորա թոռն նոյն դաւանութեանն կը պատկանէր, ապրելով մինչեւ 260/873 թ. Հայաստանում, ապա Խորասանում, որտեղից նա անցաւ Հնդկաստան, Եգիպտոս եւ ապա Մաղրիբ։ Նորա մահուան թիւը յայտնի չէ։

Թէեւ Եաքուբիի գործը "Աբբասեանների պատմութիւն" տիտղոսն է կրում, սակայն իսկապէս ներկայացնում է տիեզերական պատմութիւն երկու հատորով, որոնցից առաջինն՝ նախիսլամական ժամանակի, իսկ երկրորդն՝ Մահմեդի եւ նորա յաջորդների պատմութիւնն մինչեւ 259/872 թ. կը պարունակեն։ (De Goeje, Travaux de la 3ème sess. du congr. intern. des orient, Leiden, 1879, II, 153—166. C. Brockelmann, Geschichte d. arab. Literatur, B. II, 226.)

Ապրելով Հայաստանի սահմաններում եւ մնա շփուելով տեղացիների հետ, որոնցից նա անշուշտ քաղել է իւր պատմական նիւթը, հեղինակը արժանահաւատ աղբիւր կը հանդիսանայ երկրիս քաղաքական պատմութեան համար, երբեմն բնաւ տարբերուելով այլ արաբացի մատենագրերից, երբեմն հարստացնելով նոցա տեղեկութիւնները